

## Շրջիկ գրադարանի այցը Տավուշի մարզի՝ Նոյեմբերյանի տարածաշրջան

Հայաստանի ազգային գրադարանի փոխտնօրեններ՝ Ռաֆիկ Ղազարյանը, Հասմիկ Ղազարյանը, գրքափոխանակության բաժնի վարիչ Անժելա Սամսոնյանը մայիսի 15-ին շրջիկ գրադարանով (բիբլիոթեկուսով) այցելեցին Տավուշի մարզ: Գրադարաններին նվիրեցին 1173 միավոր գրականություն, որից Նոյեմբերյանի քաղաքային գրադարանին -172 միավոր, (Սարի գյուղի, Կողբ, Բերդավան գյուղերի գրադարաններին -109 ական միավոր, Ոսկեպար, Կոթի գյուղերի գրադարաններին -95 ական միավոր) ինչպես նաև զինվորական գործաստի գրադարանին - 484 միավոր: